



**«ԵՐԵՎԱՆԻ ՄԻԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ**



ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

Հայաստան, 0025, Երևան, Կորյունի փ. 2, հեռ. 060621238, 2-38, ss@ysmu.am

**«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 29-Ի ԹԻՎ 7 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏՈՒՄ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Երևանի Միսիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊԲՀ) կանոնադրության 55-րդ կետը, ԵՊԲՀ գիտական խորհուրդը, լսելով ԵՊԲՀ զարգացման և մարքեթինգի գծով պրոռեկտոր Ա.Ա.Ղազարյանի զեկուցումը, հետքուհական և շարունակական կրթության գծով պրոռեկտոր Գ.Ա.Ավետիսյանի, ռեկտորի խորհրդական Ի.Ե.Աբգարյանի, գիտական վարչության պետ Ս.Քոչարյանի և գիտական քարտուղար Տ.Գ.Ավագյանի հաղորդումները,

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. ԵՊԲՀ զարգացման և մարքեթինգի բաժինների 2018 թվականի ընթացքում կատարած աշխատանքները գնահատել բավարար և հավանություն տալ այդ աշխատանքների շրջանակներում իրականացվելիք գործողությունների վերաբերյալ առաջարկներին (կցվում է) (19-05-07-01) :
2. Հաստատել մասնագիտական և շարունակական կրթության կենտրոնի՝
 - 1) «Ընդհանուր բժշկական գործունեություն» մասնագիտությամբ ինտերնատուրայի մասնագիտական ուսուցման տիպային ուսումնական պլան-ծրագիրը (19-05-07-02),
 - 2) «Ընդհանուր բժշկական գործունեություն զինված ուժերում» մասնագիտությամբ ինտերնատուրայի մասնագիտական ուսուցման տիպային ուսումնական պլան-ծրագիրը (19-05-07-03),
 - 3) «Ընտանեկան (ընհանուր) ստոմատոլոգիա» մասնագիտության կլինիկական օրդինատուրայի մեկուկես տարվա ուսումնական ծրագիրը (19-05-07-04),
 - 4) «Թերապևտիկ ստոմատոլոգիա» մասնագիտության կլինիկական օրդինատուրայի մեկուկես տարվա ուսումնական ծրագիրը (19-05-07-05),
 - 5) «Օրթոպեդիկ ստոմատոլոգիա» մասնագիտության կլինիկական օրդինատուրայի մեկուկես տարվա ուսումնական ծրագիրը (19-05-07-06),
 - 6) «Վիրաբուժական ստոմատոլոգիա» մասնագիտության կլինիկական



- օրդինատուրայի մեկուկես տարվա ուսումնական ծրագիրը (19-05-07-07),
- 7) «Ատամնային իմպլանտոլոգիա» լրացուցիչ մասնագիտացման վեցամսյա կրթական ծրագիրը (19-05-07-08),
 - 8) «Լապարասկոպիկ վիրաբուժություն» լրացուցիչ մասնագիտացման չորսամսյա կրթական ծրագիրը (19-05-07-09),
 - 9) «Ռազմաբժշկական փորձաքննություն» կատարելագործման դասընթացի ուսումնական պլան-ծրագիրը (19-05-07-10)
3. Հաստատել՝
- 1) <<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> հիմնադրամի պատվավոր պրոֆեսորի կոչման շնորհման կարգի և պայմանների մասին կանոնակարգը (19-05-07-11),
 - 2) <<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> հիմնադրամի գիտական խորհրդի 2013 թվականի հունիսի 3-ի թիվ 11 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին որոշումը (19-05-07-12),
 - 3) <<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> հիմնադրամի զարգացման բաժնի գործունեության կանոնակարգը (19-05-07-13),
 - 4) <<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> հիմնադրամի մարքեթինգի բաժնի գործունեության կանոնակարգը (19-05-07-14),
 - 5) Ուսումնական և գիտական գործունեության արդյունավետության ցուցանիշների մեթոդաբանությունը (19-05-07-15):
4. Հիմք ընդունելով քվեարկության արդյունքները և հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունները՝
- 1) ԵՊԲՀ ռազմաբժշկական ֆակուլտետի ռազմադաշտային վիրաբուժության ամբիոնի պետի պաշտոնում ընտրված համարել Բ.Գ.Թ., Բ/Ծ փոխգնդապետ Կամո Ռաֆիկի Շաբոյանին (19-05-07-16),
 - 2) թերապևտիկ ստոմատոլոգիայի ամբիոնի վարիչ Բ.Գ.Դ., դոցենտ Լազար Կարլենի Եսայանին շնորհել պրոֆեսորի գիտական կոչում՝ սույն որոշումը սահմանված կարգով ներկայացնելով ՀՀ ԲՈԿ-ի հաստատմանը (19-05-07-17),
 - 3) հիգիենայի և էկոլոգիայի ամբիոնի ավագ դասախոս, Բ.Գ.Թ. Քրիստինա Կարենի Վարդանյանին շնորհել դոցենտի գիտական կոչում՝ սույն որոշումը սահմանված կարգով ներկայացնելով ՀՀ ԲՈԿ-ի հաստատմանը (19-05-07-18):
5. Որոշման կատարման հսկողությունը հանձնարարել ռեկտոր պրոֆեսոր Ա.Ա.Մուրադյանին:

ՆԱԽԱԳԱՀ՝

ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ՝



Բ.Գ.Դ. ՊՐՈՖ. Ա.Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Բ.Գ.Դ. ՊՐՈՖ. Տ.Գ. ԱՎԱԳՅԱՆ